որ նրա եռանկյունիները ծածկեն աջ և ձախ ականջները, վերին ժապավենն ընկնի գլխի գագաթին, ստորինը՝ ծնոտի տակ, պուժուժնէրը պօչէրի կլխավը՝ այտերի վրա, որ պօչէրն երևան։ Քրդէրն աջից և ձախից ետ անցկացնելով՝ կապում էին ծոծրակի վերին մասում։ Ապա գցում էին վերջին մէտակը նախկինների նման։ Այնուհետև բերանի ուղղությամբ կապում էին ղէղաջ էքկալը, նախապես վերին մասում չին-չին անելով, իսկ ստորին մասը բկի տակ փաթաթելով։ Պառավները ստորին մասը, ղէղաջի տունդը՝ սուր անկյունը կրծքի վրա ազատ կախված էին թողնում մինչև գոտին. երբեմն էլ ղէղաջի տունդը գոտու մեջ կոխում էին, որ կախված չլինի։ Քէքկալավ երիտասարդները միայն բերանն էին ծածկում, իսկ պառավները նաև քթի ստորին հատվածը։ Քէքկալի վրա ջանէլնէրը կապում էին կօլի շարդաքն. եռանկյունաձև ծալում էին, գցում գլխին, երկու ծայրերը բերում դեպի ձախ ականջը և այդտեղ խաչաձև իրար վրա դնում, ապա ձախ ականջի տակից մի ծայրը տանում էին ծոծրակը, իսկ մյուսը՝ նախ նույն տեղից տարածելով ծնոտի վրայով և թողնելով սպիտակ էքկալը վերին կողմը ազատ, տանում էին աջ ականջի մոտով դարձյալ դեպի ծոծրակը և խզի տակ երկու ծայրերը հանգուցում կամ փոքր չանգալնէրավ մէր անում՝ ցցում ծոծրակին։ Այս ամենի վրայից գցում էին լէշագը ղէղաջ ծալած կամ կտրած։ Նրա մի ծայրին կար չանգալ, որով և ամրացվում էր գլխին։ Այս ամբողջը ծածկվում էր ղէղաջ ծալած շալավ կամ շարդաքավ, տունդէրը կախված և մի սանջրդավ՝ քորոցով գլխին քաղած՝ ցցած։ Նորահարսի շարդաքն առջևից շատ լայն վայր քաշած՝ կախ էին անում քորդանդ՝ եզրը կախ ընկած։ Ջարդաքի վրա հարսանիքին գցում էին թաֆը։ Մեկ տարի քորդանդ արած ջանէլ հարսի երեսը ծածկած էին պահում։

Կօլտանը պառավները գցում են վերջին մէտակից առաջ՝ կօլին տակ, չինին յէտ դուզ՝ ծնոտի հետ բկի առջև հավասար դառնա։

Ներգաղթած համայնքների կանացի զգեստն՝ ունենալով ընդհանուր նմանություն Զանգեզուրի հետ, մի քանի մանրամասնություններով տարբերվում էր։ Այսպես, արխալուղը ոչ թե բրէֆիէշկանի էր, այլ բուզմա արած՝ փոթեր հավաքած։ Գլխին դրած օղակապը կոչվում է պօլի, ընջուկատէղը՝ չանաբանդ, և նրա պուժուժնէրը՝ թօփէր։ Քէքկապը պահում էին կախված կրծքի վրա ոչ միայն պառավները, այլև երիտասարդները։

Ադրբեջանցի կնոջ արխալուղը շափկէնն էր, որը հայ կնոջ արխալուղից կարճ էր, բաղանը գրեթե գոտկատեղին և մի քիչ էլ ներքև էր, որ 2—4 մատ ծածկի թումբանի՝ փոխանի գլուխը։ Տակի հագած շապիկն էլ ավելի կարճ էր։ Ջափկէնի կուրծքը լայն բաց էր մնում, բայց գոտկատեղում հասարակ կոճակով կապված։ Գոտկատեղից ներքև՝ բրէֆիէշկանի էր և փոբա դրած։ Մի քանիսը սակայն հագնում էին հայկական ձևի արխալուղ, բայց անհամեմատ ավելի կարճ, գործ էին ածում նաև շափռաստ։ Թէվֆէրն առանց ալուստու-ի. կտրվածքը սկսվում էր կոնատակից. ուղած ժամանակ կոճկում էին, իսկ սովորաբար թողնում էին բաց կախված։ Ճուռ-ճուփնէր էին դնում, սակայն կտրվածքների և փեշերի շուրջը կարում էին տափակ դուզմանէր՝ սլաքաձև։



Գծ. 3. Ճուռ ճուփնէր։

Գծ. 4. Ալուստուի ձևը։

Գծ. 5. Սլաքաձև տափակ դուզմա։